

ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱԿՈՒԲՋԱՆՅԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքում առկա խնդիրների՝ ըստ առաջնահերթությունների դասակարգման և դրանց տրվող լուծումների գործում կարևոր է բյուջետային գործընթացի ճիշտ կազմակերպումը, այն է՝ բյուջեի եկամուտների հավաքագրման անհրաժեշտ մակարդակի ապահովում, հավաքագրված միջոցների արդյունավետ և խնայողական օգտագործում:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

1. Իրականացնել համայնքի հաշվեկշռում գտնվող վարչական կառույցների շենքային պայմանների բարելավման աշխատանքներ,
2. Սահմանել համայնքի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների նոր՝ ավելի բարձր և ավելի որակյալ նշաձող,
3. Աշխատանքներ իրականացնել բազմաբնակարանային բնակելի շենքերի սպասարկման բնագավառում,
4. Իրականացնել կապիտալ ներդրումներ համայնքի ճանապարհային տնտեսությունում, համայնքային սեփականություն հանդիսացող ջրագծերի նորոգման/փոխարինման աշխատանքներում,
5. Վեր հանել համայնքում առկա սոցիալապես խոցելի խմբերի խնդիրները և դրանց տալ լուծումներ՝ համայնքի լիազորությունների շրջանակներում,
6. Նպաստել համայնքի մարզամշակութային կյանքի ակտիվացմանը :

2023 թվականի բյուջեի նախագծով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ձևավորած վարչական մասի պահուստային ֆոնդը նախատեսվում է օգտագործել բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման և համայնքում կապիտալ ծրագրերի ֆինանսավորման /համաֆինանսավորման/ նպատակով:

Վերոնշյալ թվարկված ուղղություններն իրականացնելիս անհրաժեշտ է մշտապես պահպանել համայնքի բնակավայրերի համաչափ զարգացման հայեցակարգը: Մեր ծրագրերի, նպատակների իրագործումն ուղղված է համայնքի բնականոն զարգացումն ապահովելուն և համայնքի բնակիչների կյանքի որակի բարձրացմանը:

ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՀԱԿՈՒԲՋԱՆՅԱՆ